ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Արթուր Համբարձումյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն), 2023 թվականի հուլիսի 10-ից 14-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն, ԱՄՀ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Կառավարության ֆինանսական վիճակագրության (GFS) և Պետական հատվածի պարտքի վիճակագրության (PSDS) ոլորտների շրջանակներում կազմակերպված «Հարկաբյուջետային վիճակագրության որակի բարելավում» տարածաշրջանային աշխատաժողովին

5. **Քննարկված թեմաները.**

- Կառավարության ֆինանսական վիճակագրության շրջանակը,
- Կառավարության ֆինանսական վիճակագրության և Պետական հատվածի պարտքի վիճակագրության ոլորտային դասակարգումը՝ տեսություն, արտաբյուջետային միավորներ,
- Ոլորտային դասակարգումը հարկաբյուջետային ռիսկերի կառավարման համատեքստում,
- Համախմբում (կոնսոլիդացիա)՝ տեսություն, ոլորտայնացում, գործարքների դասակարգում,

- Պետական հատվածի պարտքի վիճակագրության տվյալների հավաքագրում և հաշվետվողականության պահանջներ, Համաշխարհային բանկի պետական հատվածի պարտքի վիճակագրության տվյալների բազան,
- Մասնակից երկրների կողմից տեխնիկական աջակցության կարիքների վերաբերյալ քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովին ներկա են գտնվել տարածաշրջանի 9 երկրների 26 մասնակիցներ: Աշխատաժողովի ընթացքում Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ, առաջադրվել են խնդիրներ և կազմակերպվել են խմբային քննարկումներ, որոնց արդյունքում ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

17 հուլիսի, 2023թ.